

ԿԱՐԾԻՔ

ՎԻԿՏՈՐԻԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ՝

«ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԱՐԵԳԻՆ ԱՌԱՋԻՆԸ ՄԱՆԿԱՎԱՐԺ»

ԽՈՐԱԳՐՈՎ ԹԵԿՆԱԾՈՒԱԿԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մեծապես գնահատելի է ու անհրաժեշտ Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի մտավոր, հոգևոր և մանկավարժական գործունեության անպարագիծ տարադրությունը մեր ժողովրդին հանձնելու նախաձեռնությունները:

Գարեգին Ա. Ամենայն Հայոց կաթողիկոսն իր մտքի սևեռումներով ու հոգու թռիչքներով, գիտական պրպտումներով առսնցքային տեղ է զբաղեցնում մատենագրական, աստվածաբանական, գեղարվեստական գրականության ու մանկավարժության մեջ: Գարեգին Վեհափառն ամենից առաջ մտավորական էր, բառի ամենախորն իմաստով: Սակայն չեղավ ինքնակենտրոն և ինքնանպատակ մտավորական: Իր ձեռքբերածը և իր ունեցած ուրիշներին բաշխելու բնատուր կոչումն իրագործեց հետևողականությամբ ու նվիրումով: Նույնիսկ Հայրապետական Գաւի վրա Վեհափառը չհեռացավ ուսուցչությունից, ուսուցչությունն իր կյանքի բոլոր փուլերում էր: Մտավորականի և ուսուցչի այս սերտ միախառնումը դարձավ Վեհափառի հզորության գրավականը:

Գարեգին Ա-ն իր կարճաժամկետ գահակալության տարիներին ստեղծեց Հովվապետի և ազգի ու հայրենիքի անժառցորդ նվիրյալի անգուգական կերպար՝ հիմքում ունենալով երեք կարևոր արժեքներ՝ հայրենիք, Եկեղեցի և ժողովուրդ:

Գարեգին Ա Հովվապետի գործունեության վերաբերյալ ասպարեզում գիտական և մանկավարժական աշխատություններ չկան: Շնորհիվ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ն. Հարությունյանի՝ մանկավարժական պատմության մեջ արձանագրվեցին հպարտությամբ արտաբերելի հայ մանկավարժ կաթողիկոսներ Վազգեն Առաջինի, Գարեգին Առաջինի անունները՝ այսպիսով նաև հիմք դնելով մանկավարժության պատմության նոր շերտերի բացահայտմանը: Ն.

Հարությունյանը «Հայ մանկավարժ կաթողիկոսներ» աշխատության մեջ նշում է իրավացիորեն. «Մեր ժամանակի սփյառված ճանաչում ունեցող հոգևոր մեծ առաջնորդ և վաստակաշատ մանկավարժ Գարեգին կաթողիկոսի մանկավարժական արժեքավոր հայացքների մասին կարելի է անվերջ խոսել, քանի որ նրա միտքը մի անհատակ օվկիանոս է. որքան պեղես, այնքան անգին գանձեր կգտնես»:

Առանձնակի գնահատելի է, որ պրոֆեսոր Հարությունյանի ղեկավարմամբ ատենախոս Վիկտորիա Բաղդասարյանը ստանձնել է շնորհակալ, պատասխանատու և պատվաբեր աշխատանք. Վեհափառ Հայրապետի անձի, կյանքի ու ծառայության կենսական տարածքներից լուսարձակի տակ է բերել եկեղեցական առաջնորդին, հրապարակախոսին, մանկավարժին, մշակութային հայրենավեր գործչին, ազգային կրթական և դաստիարակչական համակարգի զիտակին:

Ներկայիս հարափոփոխ զարգացումների ժամանակաշրջանում հրամայական անհրաժեշտություն է յուրօրինակ դիմագիծ ունեցող մտավորականի կյանքի ու ծառայության, հոգեմտավոր գանձարանի ուսումնասիրությունը՝ մեր հավատքի, ոգեղեն ամենքերի ու բարոյական ըմբռումների մեջ անսայթաք և ամուր մտալու համար, մղվելու ինքնամաքման, մարդակերտման և հոգեկերտման, անգամ ոգեշնչվելով՝ լծվել հայրենաշինության գործին. «Հայրենասիրությունը արժեք չունի, եթե հայրենաշինութեան չվերածուի»: Այս պատգամով է առաջնորդվել Մեծ հովվապետը՝ հայրենասիրությունը դիտարկելով ինքնին զգացմունք, իսկ հայրենաշինությունը՝ գործ, կյանքի առաջընթացի խնդիր՝ հանուն միասնական ու ամուր պետականության:

Վիկտորիա Բաղդասարյանի ատենախոսության ներածությունը կառուցված է զիտական աշխատանքի նախաբանի չափանիշներին համապատասխան:

Ներածության պատմաքաղաքական մասը՝ կապված 20-րդ դարի, ինչպես նաև Մայր հայրենիքում և սփյուռքում տեղի ունեցող իրադարձությունների հետ, ապահովում է հետազոտության գաղափարական ու պատմական հիմնավորումը, որտեղ Նշան Սարգիսյանի (Մեծի Տանն Կիլիկիո Գարեգին Բ Կաթողիկոս, Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոս) կերպարը ոչ միայն կենսագրական, այլև գաղափարական

ու արժեհամակարգային շեշտադրումներով է ներկայացվում: Ատենախոսն ընդգծում է նրա հոգևոր-հասարակական-մշակութային-ազգայահայան բազմակողմ գործունեությունը: Այս դիտարկումները հիմք են ստեղծում ատենախոսության հիմնական մասում Վեհափառ Հայրապետի մանկավարժական գործունեության և հայացքների խորքային վերլուծության համար: Սա կարևոր մեթոդաբանական մոտեցում է, որը ցույց է տալիս հետազոտության գաղափարական խորքայնությունը:

Թեմայի արդիականությունը հիմնավորված է: Հեղինակը հստակ սահմանել է նպատակը, ձևակերպել է ինը առաջադիր խնդիրները, պաշտպանության ներկայացվող չորս դրույթներն ու գիտական նորույթը:

Հատկանշական է, որ հետազոտության նորույթի չորս կետով կոռ ձևակերպումը ներառում է ինչպես աղբյուրագիտական նոր մոտեցումներ, այնպես էլ հայ մանկավարժական մտքի պատմության մեջ նոր դիտարկումներ: Հեղինակը առաջին անգամ համակողմանիորեն ներկայացնում է Գարեգին Մ-ի մանկավարժական գործունեությունը և հայացքները՝ փիլիսոփայական, հոգեբանական և դիդակտիկական համատեքստերում: Հոդվածների, կոնդակների, Հայաստանում և Լիբանանում արխիվային նյութերի ուսումնասիրությունը խոսում է աղբյուրագիտական աշխատանքի խորության մասին: Այս ամենով հանդերձ ատենախոսությունն ունի ակնհայտ գիտական արժեք և կարևորություն:

Ներածության մեջ ներկայացված տեսական և գործնական նշանակությունները նույնպես հիմնավոր և համոզիչ են: Տեսական առումով՝ հետազոտությունը լրացնում է հայ մանկավարժության պատմության ուսումնասիրությունները, իսկ գործնական առումով՝ այն կարող է ծառայել որպես աղբյուր և ուղեցույց մանկավարժության պատմությամբ հետաքրքրվողների համար:

Ատենախոսության բովանդակային մասը բաղկացած է չորս գլխից:

«Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Առաջինը մանկավարժ» թեման ներկայացնող աշխատանքի բովանդակային կառուցվածքը և բաժանումները վկայում են խորքային գիտական մտաեղացման և համակարգված մոտեցման մասին:

Ատենախոսության առաջին գլուխը վերնագրված է «Ծայրագույն պատրիարք և կաթողիկոս Նորին սուրբ Օծություն Տեր, Տեր Գարեգին Առաջինի կյանքն ու

գործունեությունը», բաղկացած է վեց ենթագլխից, որոնցում ատենախոսը մանրամասն վերլուծում է ապագա կաթողիկոս Նշան Սարգիսյանի՝ նույն ինքը՝ Գարեգին Ա կաթողիկոսի կյանքի և գործունեության կարևոր հանգրվանները, մանկավարժական գործունեության հիմքերն ու իրագործումները՝ սկսած նրա ուսումնական ճանապարհից Սիրիայում, Դպրեվանքում և Օքսֆորդի համալսարանում, մինչև կաթողիկոսական ծառայությունը Սփյուռքում և Հայաստանում: Առաջին գլուխը առանձնանում է կենսագրական-պատմագրական տեսանկյունից՝ քննադատելով Նշան Սարգսյանի կրթական և հոգևոր ուղու սկզբնական հանգրվանները: Սիրիայի կրթական միջավայրից մինչև Օքսֆորդի համալսարանում ստացած կրթությունը, ինչպես նաև նրա հովվական և վարչական ծառայությունը տարբեր թեմերում, վկայում են Գարեգին Ա-ի բազմակողմանի պատրաստվածության և միջազգային փորձի մասին: Այս բաժնի ուժեղ կողմերից է այն, որ կենսագրությունը դիտարկվում է ոչ միայն փաստագրական հենքով, այլ նաև՝ հետագա մանկավարժական ու գաղափարական հայացքները պայմանավորող գործոնների շղթայում: Գարեգին Ա-ի կաթողիկոսության շրջանը (1995–1999թթ.) համընկավ Հայաստանի Հանրապետության նորանկախ պետականության կայացման կարևոր տարիների հետ: Այս ժամանակահատվածում եկեղեցու առջև դրված էին նոր մարտահրավերներ. ազգային ինքնության վերագարթոնք, ժողովրդավարական արժեքների և պետականության ամրապնդում, հոգևոր-մշակութային զարգացման նոր ուղիների որոնում: Ատենախոսի կարծիքով, Գարեգին Ա-ն, չնայած իր կարճատև կաթողիկոսությանը, կարողացավ նոր շունչ հաղորդել եկեղեցական և ազգային կյանքին, քանի որ նա հատկապես կարևորում էր կրթության, ուսուցման և դաստիարակության դերը՝ դրանք դիտելով որպես անկախ պետականության ամրապնդման հիմնասյուն: «Ես երջանիկ եմ և երախտագիտությունս եմ հայտնում Աստծուն, որ ազատ երկրում ընտրված առաջին Կաթողիկոսն եմ: Բայց դա անսահման պատասխանատվություն է: Այս առանձնաշնորհն ունի հետևյալ հոմանիշները՝ պարտք, ջանք և պարտավորություն», - ասել է Վեհափառ Հայրապետը:

«Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Առաջինի մանկավարժական հայացքների ձևավորման նախադրյալները» վերնագրով երկրորդ գլուխը՝ բաղկացած

երեք ենթագլխից, ամփոփում է Հայրապետի մանկավարժական գործունեությունն Անթիլիասի Դպրեվանքում, ապա՝ Սուրբ Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանում, դիտարկել է նրա հետաքրքրությունն ու ներգրավվածությունն էկումենիկ հարաբերություններում: Վերլուծված են մանկավարժ-աստվածաբանի տասնյակ հոդվածներ ու աշխատություններ: Վիկտորիա Բաղդասարյանն իրավացիորեն գրում է. «Իր աշխատասիրությամբ և իր աշխատանքի որակով Գարեգին Ա Վեհափառը կարող էր հեղինակել աստվածաբանական, հայագիտական, գրական, բարոյագիտական և փիլիսոփայական համբավվոր բազում հատորներ, որոնք պատիվ պիտի բերեին յուրաքանչյուր համաշխարհային չափանիշով գնահատված հեղինակի»:

Առանձնապես արժեքավոր է ատենախոսության երրորդ գլուխը՝ վերնագրված՝ «Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Առաջինի մանկավարժական հայացքները», որտեղ հեղինակը հանգամանորեն վերլուծում է Գարեգին Ա-ի մանկավարժական հայացքները, ուսուցման և դաստիարակության վերաբերյալ նրա մոտեցումները, մայրենի լեզվի արժևորման, ինչպես նաև ուսուցչի դերի ընկալումները:

Ատենախոսն առանձնակի շեշտադրմամբ վերլուծում է Գարեգին Ա-ի մանկավարժական մտքերում անձի կրթության ուղին՝ որպես ինքնաճանաչման, ինքնաանդրադարձման, ինքնախոսության ճանապարհ, որոնք մշտական, բազմաշերտ գործընթացներ են, և պետք է կարողանալ դրանք ծառայեցնել հոգևոր աճին ու երջանկությանը: Մանկավարժական գործընթացի կազմակերպման հարցում ուսուցչի դերակատարության ու կարևորության համար անհերքելի են անձնվիրումն ու անընդհատ ինքնազարգացումը: Ուսուցչի օրնակելի տիպարի և մոտեցումների վերլուծությունների համատեքստում Վիկտորիա Բաղդասարյանը շեշտադրում է Հայրապետի անձնական օրինակի դերը, - «...ուսուցիչը պիտի սպառվի, բայց իր լույսով լուսավորի սերունդների ուղին»: Հաջորդ ենթագլուխներում բացահայտում է Վեհափառի գործունեության առանցքը. «...հավասարապես հոգ էր տանում թե՛ հոգու, թե՛ մտքի, թե՛ լեզվի անադարտության համար: Վեհափառ Հայրապետի ուղերձն այն է, որ ազգային հիշողությունը, լեզուն և հավատը երբեք չպետք է կտրվեն փրմանցից, քանի որ փրափն են ձևավորում դարերի փորձությունները հաղթահարող,

արժանապատիվ և արարող հայ մարդու հոգևոր դիմագիծը»:

Ատենախոսության չորրորդ գլխում՝ «Դաստիարակության հիմնահարցերն Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Առաջինի մանկավարժական մոտեցումներում», հեղինակն անդրադարձել է դաստիարակության հիմնախնդիրներին: Դրանք դիտարկելով փիլիսոփայության, կրոնի և հասարակական արժեքների համատեքստում: Անձի ձևավորման, հայրենասիրական դաստիարակության և արժեհամակարգային խնդիրների վերաբերյալ Վեհափառ Հայրապետի մոտեցումների վերլուծությունը, դաստիարակության բովանդակության շուրջ հարցերի քննությունը դարձնում է նրա մանկավարժական աշխատանքը համակողմանի և բազմաշերտ:

«Մարդու պատրաստության հարցը» մտահոգում էր Վեհափառ Հայրապետին նաև Սփյուռքում: Նա խստագույնս կարևորում էր Սփյուռքի և հայրենիքի կապը՝ որպես մեկ հոգևոր աշխարհագրության դրսևորում և բանաձևում. «Ազգը պետք է ապրի ոչ միայն անցյալի հիշողությամբ, այլև ապագայի տեսլականով՝ հիմնված քրիստոնեական հավատի, հայրենասիրության, մայրենի լեզվի և ընտանեկան արժեքների վրա», «Մարմին է ազգը: Այդ մարմինն իր ամբողջության մեջ եթե առողջ չլինի, ես՝ մի մասնիկս, չեմ կարող այդ վատառողջ մարմնի մեջ առողջ լինել»:

Այսօր էլ արդիական են հնչում Գարեգին Ա-ի խոսքերը. «Ով կուզեր հայ ազգը հարուածել առաջին զարկը կը հասցնէր եկեղեցիին: Ով կ'ուզեր հայ դպրոցը խորտակել, հայ ինքնութեան բերդը քանդել, հայ եկեղեցին կ'ընտրէր որպէս առաջին թիրախ»: «Մեր նոր հայրենիքի՝ ազատ ու անկախ Հանրապետության հռչակումը հոգեփոխություն պետք է առաջ բերի ժողովրդի մեջ, որ սիստեմ փոխել առանց մարդ փոխելու հաջողության չի հանգի: Սակայն ուսուցումը միայն ազգային չէ: Մարդ էակ պետք է պատրաստես: Համամարդկային արժեքներ փոխանցես: Հետևաբար մարդ էակ մարդու մեջ հայը կազմավորելը պետք է լինի մեր նոր փիլիսոփայությունը մանկավարժական դպրոցներուն, հանրային կրթական մեր բոլոր հաստատություններուն»:

Ամփոփելով ատենախոսության մասին մեր վերլուծությունը՝ կարող ենք նշել, որ Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի մանկավարժական գործունեության և հայացքների մասին ատենախոսությունը պետք է դիտարկել որպես հայ

մանկավարժական մտքի և պատմության մեջ կարևոր ներդրում: Գարեգին Ա-ն շարունակեց Վազգեն Ա-ի նախաձեռնությունները և միաժամանակ նոր ուղիներ բացեց՝ համադրելով սփյուռքի ու հայրենիքի փորձառությունները: Այս աշխատությամբ ամբողջանում է երջանկահիշատակ քահանայապետի լուսե կերպարը, մեկ այլ տեսանկյունով է հավատավոր հոտին ճանաչ դառնում հայ եկեղեցու ոչ վաղ անցյալի թագակիրներից մեկը՝ սրբակենցաղ ազնվայր, ազգի նվիրյալ Վեհափառ Գարեգին Առաջին Ամենայն Հայոց Հայրապետը:

Աշխատությունը գրված է գիտական ոճով և աչքի է ընկնում տեքստի մշակվածությամբ:

Աշխատության մեջ կիրառվել են բազմաբնույթ աղբյուրներ, ինչը մեծացնում է հետազոտության գիտական արժեքը: Հեղինակը դրսևորել է վերլուծական հմտություններ՝ համադրելով փաստերը և ներկայացնելով նոր դիտարկումներ՝ մաքուր հայերենով կատարելով յուրատիպ ընթանրացումներ և առանցքային բացահայտումներ: Ամրակուղ գիտահետազոտական աշխատանք է:

Հաշվի առնելով թեմայի արդիականությունը, գիտական նորույթը, հետազոտության խնդիրների հաջողված լուծումը, ինչպես նաև աշխատանքում արված վերլուծությունների ամբողջականությունն ու հիմնավորվածությունը՝ ատենախոսությունը գնահատում ենք որպես արժեքավոր գիտական աշխատանք: Սեղմագիրը ներառում է ատենախոսության հիմնական դրույթները:

Նշված առավելությունների կողքին կարելի է առանձնացնել որոշ դիտարկումներ.

1. Ատենախոսությունում առկա են որոշ մտքերի կրկնություններ.
2. Մայրենի լեզվի արժևորման հիմնահարցերին վերաբերող 3.3 ենթագլխում Վիկտորիա Բադդասարյանի կողմից նշվում է, որ Հայրապետը ստեղծեց նորանոր բառեր, արտահայտություններ և այլն: Կարելի էր նշել նորաստեղծ որոշ բառեր, թեև Վեհափառ Հայրապետի յուրօրինակ մտածողությունը, լեզվական արտահայտչական պատկերավորումները վեր են հառնվում բազում մեջբերումներից:

Վերոնշյալ նկատառումները բնավ չեն ազդում գիտական հետազոտության արժեքի և այն գնահատականի վրա, որին իրավամբ արժանի է:

Այսպիսով, Վիկտորիա Բադդասարյանի՝ «Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Առաջինը մանկավարժ» խորագրով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանավորման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է իր կողմից հայցած մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին՝ ԺԳ.00.01 «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ:

Պաշտոնական ընդդիմախոս,

մանկավարժական գիտությունների թեկնածու՝



Ա. Տ. Մախիլյան

Ա. Տ. Մախիլյանի ստորագրությունը հաստատում եմ՝

Գավառի պետական համալսարանի

գիտական քարտուղար, Բ. Գ. Թ., դոցենտ՝



Թ. Ա. Ասոյան

11.11.2025թ.